Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հուլիսի 17-ի N 972-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ լիազորված պետական մարմին) կողմից հավատարմագրված մշակութային արժեքների փորձաքննություն իրականացնող մասնագետների (այսուհետ՝ փորձագետ) գործունեության ապահովագրության հետ կապված հարաբերությունները:

2. Փորձագետի գործունեության ապահովագրությունն իրականացվում է պաշտպանելու փորձագետի և պետության շահերը մշակութային արժեքների փորձաքննության արդյունքում առաջացած վնասներից, ինչպես նաև փորձագետի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող գույքային շահերը, որոնք կապված են փորձաքննության արդյունքում ոչ կանխամտածված գործողությունների (մասնագիտական անուշադրության, անփութության, սխալմունքի կամ բացթողման) կամ անգործության հետևանքով փորձաքննության պատվեր ներկայացնող անձին (այսուհետ՝ հաճախորդ) կամ պետությանը ոչ միտումնավոր պատճառված վնասի, գույքի թերագնահատման կամ գերագնահատման հետևանքով առաջացած վնասները հատուցելու հետ:

3. Փորձագետի գործունեության ապահովագրումն իրականցվում է իր միջոցների հաշվին՝ մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագիր կնքելով ընդհանուր պատասխանատվության ապահովագրության լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունների հետ՝ «Քաղաքացիական օրենսգրքի» ու «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի համաձայն:

4. Սույն կարգի 2-րդ կետի վնասների դեպքում ընդհանուր պատասխանատվության ապահովագրության լիցենզիա ունեցող ապահովագրական ընկերությունները (այսուհետ՝ ապահովագրող) կատարում են ապահովագրական հատուցման վճարում հաճախորդին և (կամ) երրորդ անձին պատճառված փաստացի վնասի չափով, որը սահմանված է ապահովագրողի որոշմամբ կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, բայց ոչ ավելի քան ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումարի չափը:

5. Փորձագետն իր գործունեության իրականացման ողջ ընթացքում պետք է ունենա մասնագիտական պատասխանատվության ապահովագրության գործող պայմանագիր՝ յուրաքանչյուր տարի նոր պայմանագիր կնքելով: Պայմանագիրը գործում է կնքման պահից տասներկու ամիս:

6. Փորձագետը մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը կնքելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի պատճենը ներկայացնում է լիազորված պետական մարմնին:

7. Լիազորված պետական մարմինը փորձագետի մասնագիտական պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը հաշվառում և գրանցում է համապատասխան գրանցամատյանում:

8. Փորձագետի գործունեության ապահովագրության տարեկան սահմանվող ապահովագրության գումարները ձևավորվում են փորձագետի մատուցած ծառայությունների նախորդ տարվա շրջանառությանը համապատասխան՝

N	Փորձագետի մատուցած ծառայությունների նախորդ տարվա շրջանառություն	Տարեկան ապահովագրության գումար (տարեկան պատասխանատվության ընդհանուր սահմանաչափ)
1	Մինչև 1000000 ՀՀ դրամ	500000 ՀՀ դրամ
2	1000001 ՀՀ դրամ մինչև 3000000 ՀՀ դրամ	1000000 ՀՀ դրամ
3	3000001 ՀՀ դրամ մինչև 5000000 ՀՀ դրամ	3000000 ՀՀ դրամ
4	5000001 ՀՀ դրամ մինչև 10000000 ՀՀ դրամ	5000000 ՀՀ դրամ
5	10000001 և ավել ՀՀ դրամ	15000000 ՀՀ դրամ

9. Նոր գրանցված փորձագետների համար սահմանվում է հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ սահմանաչափ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

17.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ